

**«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

« 30 » մայիսի 2025 թվականի N 4-Լ

**«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-Ի N 2-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 13.2-րդ կետով, 28-րդ հոդվածի 5-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 6-ի N 1298-Ա որոշման հավելվածի 36-րդ կետի 17-րդ ենթակետը՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը

ՈՐՈՇԵՑ

1. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2023 թվականի մարտի 13-ի ««Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի հաստիքացուցակը հաստատելու մասին» N 2-Լ որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ

ք. Երևան